# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մասիսի քաղաքային համայնք, ք.Մասիս Կենտրոնական հրապարակ թիվ 4,
☎ /0236/ 4-30-40. 4-04-40, էլ.փոստ masismer@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«16» դեկտեմբերի 2011 թվականի N 85-Ա**

### ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 3-րդ կետի« «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 4-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Ֆոնդային բյուջեի համայնքի սեփականություն համարվող հողերի իրացումից եկամուտները ավելացնել 1000.0 հազ.դրամով, այն ուղղելով՝ մշակութային այլ միջոցառումներ (8.2.4) գործառնական դասակարգման այլ մեքենաներ և սարքավորումներ (5129) հոդվածին:

| | ԿՈՂՄ (9) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ՍԵՐԳԵՅ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ բաց. | | | |
| ԼԵՎՈՆ ԱՋԱՏԽԱՆՅԱՆ | [signature] | | |
| ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | [signature] | | |
| ԱՆԴՐԱՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ | [signature] | | |
| ՎԼԱԴԻՄԻՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ | [signature] | | |
| ԳԱԳԻԿ ԳԻԼՈՅԱՆ | [signature] | | |
| ՀԱՄԼԵՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ | [signature] | | |
| ՏԻԳՐԱՆ ՂԱՄԲԱՐՅԱՆ | [signature] | | |
| ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ | [signature] | | |
| ՆՈՐԱՅՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ | [signature] | | |
| ՎԻԳԵՆ ՌՍԿԱՆՅԱՆ բաց. | | | |
| ԿԱՐԵՆ ՏՈՆՈՅԱՆ բաց. | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [signature] ԴՄԻՏՐԻ ՆԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մասիսի քաղաքային համայնք, ք.Մասիս Կենտրոնական հրապարակ թիվ 4,
☎ /0236/ 4-30-40. 4-04-40, էլ.փոստ masismer@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«16» դեկտեմբերի 2011 թվականի N 86-Ա**

### Ա.Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մասիս քաղաքի, Մասիս կայարանի 2-րդ թաղամասի, 3-րդ փողոցի 18-րդ շենքի թիվ 2 բնակարանում 1995թվականից բնակվում է Ավետիս Գուրգենի Հարությունյանը ընտանիքով (միասնական օրդեր N5189):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի, 32 հոդվածի 12 կետի պահանջներով և ընդառաջելով Ավետիս Գուրգենի Հարությունյանի խնդրանքին ՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Մասիսի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող Մասիս քաղաքի Մասիս կայարանի 2-րդ թաղամասի, 3-րդ փողոցի 18-րդ շենքի թիվ 2 բնակարանը (ընդ. մակ.՝ 58.6 քմ) նվիրատվությամբ հատկացնել Ավետիս Գուրգենի Հարությունյանին, Լուսյա Հարությունյանին, Մարինե Հովհաննիսյանին, Սարգիս Ավետիսի Հարությունյանին, Աննա Հայրապետի Հարությունյանին և Գարեգին Ավետիսի Հարությունյանին:
2. Փաստաթղթերի ձևակերպման ծախսերը թողնել Ա.Հարությունյանի վրա:
3. Նվիրատվությունից հետո հիշյալ բնակարանը հանել հաշվապահական հաշվեկշռից:

| | ԿՈՂՄ (9) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ՍԵՐԳԵՅ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ | | | |
| ԼԵՎՈՆ ԱՁԱՏԽԱՆՅԱՆ | | | |
| ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | | | |
| ԱՆԴՐԱՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| ՎԼԱԴԻՄԻՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ | | | |
| ԳԱԳԻԿ ԳԻԼՈՅԱՆ | | | |
| ՀԱՄԼԵՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ | | | |
| ՏԻԳՐԱՆ ՂԱՄԲԱՐՅԱՆ | | | |
| ՎԱՀԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ | | | |
| ՎԻԳԵՆ ՈՍԿԱՆՅԱՆ | | | |
| ԿԱՐԵՆ ՏՈՆՈՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԻՏՐԻ ՆԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մասիսի քաղաքային համայնք, ք.Մասիս Կենտրոնական հրապարակ թիվ 4,
☎ /0236/ 4-30-40. 4-04-40, էլ.փոստ masismer@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

**«16» դեկտեմբերի 2011 թվականի N 84-Ն**

ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Մասիսի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեն՝
   ա) եկամուտների գծով 385879.93 հազար դրամ
   բ) ծախսերի գծով՝ 385879.93 հազար դրամ
   այդ թվում՝ վարչական բյուջեն՝
   եկամուտների գծով՝ 355879.93 հազար դրամ
   ծախսերի գծով՝ 355879.93 հազար դրամ
   ֆոնդային բյուջեն՝
   եկամուտների գծով՝ 30000.0 հազար դրամ
   ծախսերի գծով՝ 30000.0 հազար դրամ
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հավելված 1-ի
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման համաձայն հավելված 2-ի
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման համաձայն հավելված 3-ի
5. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման համաձայն հավելված 6-ի
6. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝
   ա/ թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու քաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,
   բ/ սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15%-ը:

| | ԿՈՂՄ (9) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ՍԵՐԳԵՅ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ | [signature] | | |
| ԼԵՎՈՆ ԱԶԱՏԽԱՆՅԱՆ | [signature] | | |
| ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | [signature] | | |
| ԱՆԴՐԱՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ | [signature] | | |
| ՎԼԱԴԻՄԻՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ | [signature] | | |
| ԳԱԳԻԿ ԳԻԼՈՅԱՆ | [signature] | | |
| ՀԱՄԼԵՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ | [signature] | | |
| ՏԻԳՐԱՆ ՂԱՄԲԱՐՅԱՆ | [signature] | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՎԱՀԵ | ՄՈՎՍԻՍՅԱՆ | ______ | ______ | ______ |
| ՆՈՐԱՅՐ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ | ______ | ______ | ______ |
| ՎԻԳԵՆ | ՌՍԿԱՆՅԱՆ | ______ | ______ | ______ |
| ԿԱՐԵՆ | ՏՈՆՈՅԱՆ | ______ | ______ | ______ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴՄԻՏՐԻ ՆԱԶԱՐՅԱՆ